Միսաք Մեծարենց

Գետափի երազանք

Գյուղն համորեն կը մրափե ծոցն արևոտ ժայռերուն,
տիվանդորրի պահն ըմպած է մեղկ հեշտություն մը սյուքի,
ու ջուրերուն վրա կը ցանե գինովի դողն իր թրթռուն,
գետն համբույրի մը երազով դեպ ի ափունք կը թեքի:

Գետեզերյա ծառաստաններ, միջօրետքի այս պահուն,
ինձ անծանոթ թավուտքներե կը խրկեն բույրն հեշտանքի,
որ համրորեն կը ծավալի ծաղիկներեն այն լրքուն,
ասդին անդին տարտրղնըված՝ որոնց հոգին կը ցամքի:

Եվ հընամի ծառեր զյումրյութ միայնությանց ընդմեջեն
կ'արտածորեն մուշկի բույրեր ու ժպիտներ ալ բոսոր.
կիսամըրափ կ'երազեմ, զիս աղաղակներ կը կանչե՞ն…:

Ձայներ՝ դյութիչ աշխարհներե, տարտա՞մ, անո՞ւյշ, հեռավո՞ր՝
որոնք անդին զիս կը տանին երանաստան մը բաղձոտ
Ու կը նիրհեմ արբշիռ՝ հովին դյութիչ նեկտարն ըմպած հոդ: